

Ազգություն

ՓԵՏՐՎԱՐ 15 - 25 2014 Թ. ԹԻՎ 3 (2025)

ՏԱՆՈՐՅԱ ԹԵՐԹ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1951 Թ. ԳԻՆԸ 120 ԴՐԱՄ

ՀԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՄ

ԱՉԱԿՅՈՒԹՅՈՒՆ ԶԵՆՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Կառավարությունում տեղի է ունեցել խորհրդակցություն՝ Պահածոյագործների միության ներկայացուցիչների և պարասպորտային գերատեսչությունների ու կառույցների ղեկավարների մասնակցությամբ: Հանդիպման նպատակն էր՝ ծանոթանալ բանջարեղենային և մրգային խյուսի, պահածոների, ինչպես նաև մրգահյութների արտադրությամբ զբաղվող ձեռնարկությունների խնդիրներին և քննարկել նրանց պետական աջակցության հնարավոր եղանակները:

Խորհրդակցության մասնակիցները կառավարության ղեկավարին են ներկայացրել ոլորտում փորձը իրավիճակն ու առկա խնդիրները: Նշվել է, որ ներկայումս Հայաստանում գործում է մրգային և բանջարեղենային պահածոներ ու մրգահյութեր արտադրող մոտ 40 ընկերություն, որոնք հիմնականում աշխատում են թերի ծանրաբեռնվածությամբ: Պարտառներն են՝ շրջանառության միջոցների պակասը, արտադրանքի սպառման փոքր ծավալները և ոչ բավարար առաջնային հումքը (տեխնիկական միրգ, հատապտուղներ, բանջարեղեն): Դրանք էլ, իրենց հերթին, համապարասպորտային պայմանավորված են վարկային միջոցների բարձր փոխարժեքով, ոչ լրիվ արտադրողական հզորությամբ աշխատանքով և ցածր բերքավորությամբ (եղանակային վար պայմանների պարտառով), գյուղատնտեսական հողերի անարդյունավետ օգտագործմամբ, գյուղացի-վերամշակող ձեռնարկություն չկանոնակարգված հարաբերություններով:



Ս. ԳՐԻԳՐՅԱՆ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱՎԱՆԱՅՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է Ավստրիայի արտաքին գործերի նախարարության Արևելյան Եվրոպայի ծրագրերի ղեկավար դոկտոր Շտեֆան Շոլցի գլխավորած պարզապարզությանը: Պարզապարզության կազմում էին նաև Հարավային Կովկասում Ավստրիայի զարգացման գործակալության ղեկավար Գունտեր Զիմերը և Ավստրիայի զարգացման գործակալության ծրագրերի ղեկավար Ռոբերտ Զեյները:

Ողջունելով հյուրերին՝ նախարարը ներկայացրել է գյուղատնտեսության ոլորտի ռազմավարական ուղղություններն ու այն խնդիրները, որոնց իրականացումը նպաստելու է համակարգի հետագա զարգացմանը: Նա մասնավորապես կարևորել է կոոպերատիվների ձևավորման, հողերի խոշորացման, ջերմոցային տնտեսությունների, ձկնաբուծության և այլ ճյուղերի զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացումը:

Այնուհետև՝ կարևորելով ավստրիական կողմի հետ նախկինում իրականացված ծրագրերի արդյունավետությունը, նախարարը հույս է հայտնել, որ համագործակցությունը շարունակական կլինի՝ հնարավորություն տալով Հայաստանին մասնակցելու Զարգացման գործակալության կողմից իրականացվող պարզապարզության մյուս ծրագրերին:

Ռոբերտ Զեյները համագործակցության արդյունքում իրականացված ծրագրերից հարկապես կարևորել է Գյուղատնտեսության համապարտած հաշվառման, ինչպես նաև՝ Անտառային տնտեսությունների զարգացման ծրագրերը: Նկատի ունենալով վերջիններիս արդյունավետությունը՝ նա հույս է հայտնել, որ հետագայում ևս կշարունակեն աջակցել Գյուղատնտեսական կենդանիների համարակալման, հաշվառման և վերամշակող հզորությունների ստեղծմանն ուղղված նոր ծրագրերին:

Հանդիպման ընթացքում կողմերը համակարծիք էին, որ առաջարկվող ծրագրերը պետք է բխեն ՀՀ գյուղատնտեսության զարգացման ռազմավարությունից և լրացուցիչ ուսումնասիրությունների անհրաժեշտություն ունեն:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ ԿՈՒՆԵՆԱ

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Լիբանանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Ժան Մաքարոնին:

Հանդիպման սկզբում կողմերն անդրադարձել են հայ և լիբանանցի ժողովուրդների դարավոր բարեկամությանն ու փոխադարձ հարգանքին, կարևորելով լիբանանահայ համայնքի դերը երկկողմ հարաբերությունների ամրապնդման գործում:

Նախարարը համառոտ ներկայացրել է Հայաստանի գյուղատնտեսության ընդհանուր պատկերը, անդրադարձել գյուղատնտեսության ոլորտում հայ-լիբանանյան հարաբերություններին, վերջիններիս զարգացման հնարավորություններին: Դեսպան Մաքարոնը հայտնել է նախարարին, որ վերջին շրջանում լիբանանցի գործարարները նկատելի ակտիվություն են ցուցաբերում Հայաստանի գյուղատնտեսության նկատմամբ՝ ցանկանալով ներդրումներ կատարել մեր երկրում:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ ՏԱՎՈՒՑԻ ՄԱՐԶ

ՀՀ փոխվարչապետ, փարածքային կառավարման նախարար Արմեն Գևորգյանը, Տավուշի մարզի Բերդի փարածաշրջանի կարգադրած աշխատանքային այցի ընթացքում, ծանոթացել է փարածաշրջանում իրականացվող ճանապարհաշինական և սոցիալական ենթակառուցվածքների բարելավման ծրագրերին: Փոխվարչապետին ուղեկցել են Տավուշի մարզպետ Ա. Դուրյանն ու Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի (ՀՄՆՀ) գործադիր տնօրեն Ա. Կիրակոսյանը:

Փոխվարչապետն այցը սկսել է Գիլիջանի փարածաշրջանի Թեղուր համայնքից, որպեսզի ՀՄՆՀ ծրագրով կառուցվում է նոր մանկապարտեզ: Ա. Գևորգյանը ծանոթացել է շինարարական աշխատանքների ընթացքին: Նախապես նշվեց, որ նոր շենքը շահագործման կհանձնվի ամռանը: Ավելի քան 120 մլն դրամ արժեքով ծրագրին, համաֆինանսավորման եղանակով, մասնակցում է նաև համայնքը:

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՀՄԿՈՒՄ

ՆՈՐ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԵՆՏՐՈՆԻՆ

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն այցելել է ԳՆ Երկրագործության գիտական կենտրոն, հանդիպել գիտնականների և մասնագետների հետ, ծանոթացել հացահատիկային և հատիկաբույսերի մշակաբույսերի ընտրասերման, գիտական սերմնաբուծության և սորտափորձարկումների կազմակերպման գործընթացներին:

2013 թվականի աշխատանքների ամփոփման և ընթացիկ փուլի արդյունքների քննարկման արդյունքում, նախարարը դժգոհություն է հայտնել կենտրոնի գործունեության վերաբերյալ, փվել կոնկրետ հանձնարարականներ կենտրոնի 87 հա հողատարածքի գիտական հատվածը կարող է բարձրացնելու համար:

Կենտրոնի ղեկավարության ուշադրությունը հրավիրելով արտադրական և գիտական ներուժի նպատակային օգտագործման աշխատանքներում չափելի արդյունք ապահովելու վրա՝ նախարարը գործունեության բարեփոխումների ժամկետ է սահմանել մինչև առաջին կիսամյակի ավարտը, որի արդյունքներով էլ կկատարվեն համապարասպորտային եզրահանգումներ:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում սկսվել են նախորդ փուլի գործունեության հաշվետվությունները և ընթացիկ փուլի խնդիրների քննարկումները:

Օրերս ՀՀ գյուղատնտեսության նախարարի մոտ կայացած խորհրդակցության ընթացքում քննարկվել են նաև երեք հաշվետվություններ: Կարգադրած աշխատանքների ամփոփումներով հանդես են եկել Սյունիքի, Վայոց ձորի և Արարատի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնների ղեկավարները:

Հաշվետու բոլոր կենտրոնները, թվում է, հաջողությամբ են եզրափակել փուլը, իսկ նախապես ծրագրերն իրականացվել են: Գյուղացին մասնագիտական խորհրդատվություն ստացել է: Սակայն, տեղում իրավիճակին ամբողջովին փորձաքննելու, անհրաժեշտ և հավաստի տեղեկատվությամբ նախարարությանն ու հասարակությանն ապահովելու, նոր, լրացուցիչ ծառայություններով արտաբյուջեային միջոցներն ավելացնելու, նորագույն տեխնոլոգիաների ներդրման և օրախնդիր նման հարցերի առումով ԳԱՄԿ-երը դեռևս լուրջ անելիքներ ունեն:

Շահագրգիռ քննարկման արդյունքում, մարզային կենտրոնների տնօրենները հավաստիացրել են, որ կկատարվի ամեն ինչ՝ ընթացիկ փուլի գործունեությանը նորովի մոտենալու, գյուղացուն նոր, լրացուցիչ ծառայություններ առաջարկելու, ֆինանսական լրացուցիչ եկամուտներ ապահովելու ուղղությամբ:

1

ԱՅԱԿՈՒԹՅՈՒՆ ԶԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Վարչապետը նշել է, որ կառավարությունը շահագրգռված է, որպեսզի մասնավոր հարվածը համախմբված ձևով այս խնդիրները լուծի և պարաստարակամ է աջակցել բոլոր նախաձեռնություններին, եթե դրանց շուրջ լինի մասնավոր հարվածի ձեռնարկությունների միասնական մոտեցումը: Ինչպես նաև բյուջեից փոխադրված և սուբսիդիաների մեծ մասն ուղղվում է գյուղատնտեսությանը: Սուբսիդավորվում են ոչորփին հարկացվող վարկերի փոկոսադրույքները, վառելիքը, սերմացուն, պարարտանյութը: Սա այն ոչորփն է, որն իսկապես գրնվում է պետության ուշադրության կենտրոնում:

Արտադրանքի սպառման ծավալի ավելացման և արտահանման կազմակերպման նպատակով, կառավարության ղեկավարն անհրաժեշտ է համարել հայկական արտադրանքի բրենդավորման կոնկրետ բիզնես-ծրագրի մշակումը, որում սահմանված կլինեն պետություն-մասնավոր հարված փոխադրած պարարավորությունները, համարել աշխարհային ձևաչափը, թիրախավորված ապրանքատեսակները, դրանց ներկայացվող որակական չափանիշները, արտահանման լոգիստիկան:

ՀԱՍԱԳՈՐԾԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԶԵՌՆԱԿԱՐՆԵՐ ԿՈՒՆԵՆԱ

Վ կ ա յ ա կ ո ջ է լ ո վ նրանցից մեկին, ով ցանկանում է Հայաստանում զբաղվել ընկույզի մշակությամբ, դեսպանը խնդրել է փրամադրել տեղեկատվություն՝ լիբանանցի գործարարներին պետության կողմից հնարավոր աջակցություն ստանալու վերաբերյալ:



Նախարար Ս. Կարապետյանը նշել է, որ ՀՀ կառավարությունը խրախուսում է մեր երկրում կատարվող ներդրումները, հարկապես՝ գյուղատնտեսության ոլորտում և պարաստարակամություն է հայտնել հնարավորին բազմակողմանիորեն աջակցել բոլոր այն լիբանանցի գործարարներին, որոնք ներդրումներ կկատարեն մեր երկրում:

Դեսպան Մաքարոնը ցանկություն է հայտնել Հայաստանում կազմակերպվող ագրոպարենային արտաներքերի ցուցահանդեսներին մասնակից դարձնել նաև լիբանանցի գործարարներին, որին, ի պատասխան՝ Սերգո Կարապետյանը պարաստարակամություն է հայտնել ամեն փարի հոկտեմբերին Երևանում կազմակերպվող «Արմպրոդէքս-պո» ցուցահանդեսին հրավիրել նաև լիբանանցի գործարարներին:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅ

ԳՅՈՒՂԱՏՆԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՄԱՆ ԶԵՌՆԱԿԱՐ

Օրերս Արմավիրի մարզում էր ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը: Նախարարը, մարզպետ Աշոտ Դահրամանյանի ուղեկցությամբ, նախ եղավ Գեղակերտ համայնքում գտնվող Ելակի թաղամասային ցանցերում, ծանոթացավ մշակության պայմաններին, գրուցեց գյուղացիների հետ: Համայնքը հիմնականում զբաղվում է Ելակի մշակությամբ, որի արդյունքներից հողագործները գոհ են: Իրացման խնդիրներ նույնպես չունեն: Այս փարվա եղանակային պայմանները նույնպես բարձր բերքի երաշխիք են փալիս:

Գյուղացիների հետ զրույցի ընթացքում նախարարն անդրադարձավ պետական աջակցության ծրագրերին, նշեց, որ հանրապետության նախագահի հանձնարարությամբ, այս փարի նույնպես գյուղացիական փոխադրությունները, մարզելի գներով, կստանան սերմացու, պարարտանյութ և դիզելային վառելիք: Շարունակվում է նաև ցածր փոկոսադրույքներով գյուղացիներին վարկավորելու քաղաքականությունը: Այս ամենը, ըստ նախարարի, հնարավոր են դարձնում գերազանցել գյուղատնտեսության զարգացման նախորդ փարվա բարձր ցուցանիշները:

Օրվա երկրորդ կեսին նախարարը մասնակցեց մարզխորհրդի նիստին, խոսեց հանրապետության գյուղատնտեսության զարգացման հեռանկարների և դրանցից բխող մարզային խնդիրների մասին, այնուհետև լավ աշխարհային համար մեղալներ ու շնորհակալագրեր հանձնեց մարզի գյուղատնտեսության մի շարք առաջավոր աշխատողներին:

ԽԱՂՈՂԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

ԶԱՐԳԱՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Օրերս ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը խորհրդակցության էր հրավիրել հանրապետության ճանաչված խաղողագործների, գինեգործների, գիտնականների՝ քննարկելու ՀՀ խաղողագործության զարգացման ռազմավարությունը: Չնայած վերջին փարիներին իրականացված բազմաբնույթ և մեծածավալ աշխարհային շնորհիվ, նկատվում են խաղողի արտադրության վերականգնման և գինեգործության զարգացման միտումներ, սակայն ոչորփը համակարգված մոտեցում է զարգացման նոր ռազմավարություն է պահանջում:

Քննարկվող փաստաթուղթը նշված անհրաժեշտության արձագանքելու կարևոր քայլերից է և նպատակ ունի սահմանել խաղողագործության և գինեգործության զարգացման հիմնական ուղղությունները, հստակեցնել պետական աջակցության մեխանիզմները և դրա արդյունքում նպաստել խաղողի արտադրության և վերամշակման ծավալների ավելացմանն ու ճյուղի փոփոխական արդյունավետության բարձրացմանը:

Ծավալված շահագրգիռ քննարկման արդյունքում, մասնակիցները նոր ռազմավարության համար օրախնդիր են համարել երկու կարևոր հանգամանք՝ իրավական դաշտի և որակի վերահսկման համակարգի բարելավում և ֆինլոքսերայի դեմ փարվող պայքարի անհետադարձելի միջոցառումների իրականացում:

1

ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

Ա. Գևորգյանն այցելել է նաև Ներքին Կարմիր աղբյուր և Վերին Կարմիր աղբյուր համայնքներ: ՀՄԼՀ-ն այս համայնքներում ևս սոցիալական ենթակառուցվածքների վերականգնման ծրագրեր է իրականացնում: Ներքին Կարմիր աղբյուրում արդեն կառուցվել է համայնքային նոր կենտրոնի շենքը: Վերին Կարմիր աղբյուրում ներկայումս ընթացքի մեջ են մանկապարտեզի նոր շենքի կառուցման աշխարհային ծրագրերը: ՀՄԼՀ գործադիր տնօրենը տեղեկացրել է, որ այս փարի կիրականացվի նաև փարածաշրջանի մեկ այլ՝ Այգեպար համայնքի դպրոցի վերանորոգման ծրագիրը:

Փոխվարչապետը մարզպետի և համայնքների ղեկավարների ուշադրությունը հրավիրել է վերանորոգվող և նոր կառուցվող մանկապարտեզների ֆինանսավորման և պահպանման խնդրին՝ ընդգծելով համայնքային բյուջեներում այդ նպատակով համապատասխան միջոցների նախատեսման կարևորությունը:

Նշված համայնքներում փոխվարչապետը հանդիպել է նաև բնակիչների հետ, ովքեր ներկայացրել են իրենց հուզող հարցերը: Դրական գնահատելով կառավարության կողմից վերջին շրջանում իրականացվող գյուղատնտեսության աջակցության ծրագրերը և նշելով, որ իրենց հիմնական եկամտի աղբյուրը գյուղատնտեսությունն է՝ բնակիչները քննարկել են մարզելի գնով գյուղատնտեսիկայի, մասնավորապես, կոմբայնների ձեռք բերման հարցը: Քննարկվել է նաև ոռոգման ցանցի բարելավման խնդիրը, ինչը հնարավորություն կտա ոռոգելի դարձնել 35-40 հա խաղողի այգի: Բնակիչները կարևորել են նաև փարածաշրջանում հակակարկրային կայանների տեղադրման հարցը: Նրանք դրական են գնահատել 2013թ. սահմանամերձ համայնքների համար հողի հարկի փոխհարցման և ոռոգման ջրի վարձավճարի արտոնությունը վերաբերող կառավարության որոշումը:

Ա. Գևորգյանը տեղեկացրել է, որ կառավարությունը նախատեսում է այս փարի ևս շարունակել նույն ծրագիրը, և առաջիկայում կներկայացվի համապատասխան որոշման նախագիծը:

Բերդ քաղաքում փոխվարչապետը շրջայց է կատարել վերանորոգված մանկապարտեզի շենքում, հանդիպել աշխարհակիցների հետ: Շենքի հիմնանորոգումն իրականացվել է մարզի առաջնահերթ խնդիրների լուծման և ՀՄԼՀ-ի ծրագրերով: Փոխվարչապետը գոհունակություն է հայտնել ստեղծված պայմանների կապակցությամբ՝ հույս հայտնելով, որ մարզում անհրաժեշտ ենթակառուցվածքների առկայությունը նոր հնարավորություններ կստեղծի բնակչության համար:

Բերդում փոխվարչապետն այցելել է նաև քաղաքային հիվանդանոց, որը հիմնանորոգվում է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առողջապահական համակարգի արդիականացման ծրագրով: Նախատեսվում է երկու մասնաշենքի հիմնանորոգում և մեկ նոր մասնաշենքի կառուցում, ինչպես նաև՝ վերագինում:

Փոխվարչապետը ծանոթացել է նաև Բերդի համայնքապետարանի նախկին վարչական շենքին, որտեղ տեղակայված են գրադարանը, համայնքային այլ կառույցներ: Կատարված պարաստարակամությունների հետ քննարկվել են շենքի վերանորոգման հնարավորությունները: Ա. Գևորգյանն այցելել է նաև Բերդում կառուցվող Սուրբ Գևորգ եկեղեցու շինհրապարակ, տեղեկացել աշխարհային ընթացքին:

ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԵՆ ԳՅՈՒՂԱՏՆԵՍՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ

ՕՐԵՐՍ ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՍԵՐԳՈ ԿԱՐԱՊԵՏՅԱՆՆ ԶԵՌՆԱԿԱՐԱՆ ԵՐ ԵՐԱՄԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅՈՒՆՆԵՐԻՆ:

Օրերս ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն աշխարհային այցով Արարատի մարզում էր: Այցի նպատակը գարնան գյուղատնտեսական աշխարհային ընթացքին տեղում ծանոթանալն էր:



Մարզպետ Արամայիս Գրիգորյանի ուղեկցությամբ նախարարը նախ՝ այցելեց Դուկասավան համայնք, ծանոթացավ տեղի շերմոցային փոխադրություններին: Ցանքի և խնամքի բարոտեխնիկական պայմաններին ծանոթանալուց զատ, նրան հետաքրքրում էին նաև, թե որքանով են արդյունավետորեն կազմակերպվում պայքարի աշխարհային մոտմագրի մշակաբույսերի ցեցի դեմ: Մանավանդ, որ նախորդ փարի, գյուղացիական փոխադրությունների և մասնագետների համագործակցված աշխարհային շնորհիվ, հաջողվել էր նվազագույնի հասցնել վաղահաս կարոֆիլի բերքի կորուստը:

Ինչպես Հակոբ Համբարջյանի ջերմափայտը, ուր լուկի թփերն արդեն ձևավորված և շուրջ 20 օր հետո շուկայահանման ենթակա բերքի փակ էին, այնպես էլ հաջորդ՝ ծաղկի մշակաբույսի մասնագիտացված ջերմոցում, ուր եղավ նախարարը, հիանալի բերքից բացի, լիովին բացակայում էր նաև ցեցի վրանգը:

Օրվա երկրորդ կեսին նախարարը մասնակցեց մարզխորհրդի նիստին, իր ելույթում նշելով հանրապետության գյուղատնտեսության զարգացման հեռանկարների, դրանցից բխող Արարատի մարզի գյուղացիական փոխադրությունների խնդիրների և ծրագրերի մասին:

Բարձր գնահատելով նախորդ փարվա ձեռքբերված արդյունքները՝ Սերգո Կարապետյանը մեղալներով ու շնորհակալագրերով պարգևատրեց մարզի գյուղատնտեսության առաջավոր մի շարք մասնագետների:

ԸՆԹԱՑԻԿ ՏԱՐՎԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն օրերս այցելեց ԳՆ Բանջարաբուսության և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն, մասնակցեց կենտրոնի 2013 թվականի գործունեության հաշվետվությանն ու ընթացիկ փարվա խնդիրների քննարկմանը: Ընդամենը 22 հա հողափարածք ունեցող կենտրոնը լուրջ ներդրում ունի Հայաստանի գյուղատնտեսությանը նոր, առավել բերքատու ու դիմացկուն բանջարաբուսության և տեխնիկական մշակաբույսերով ապահովելու գործում: Կենտրոնին հանձնարարվեց ակտիվացնել աշխարհային ընթացքի մոտմագրի մշակաբույսերի վնասատուների դեմ պայքարի միջոցների մշակման ուղղությամբ:

Կենտրոնի ղեկավարության ուշադրությունը հրավիրվեց ինչպես տեղական, այնպես էլ միջազգային համապատասխան կազմակերպությունների հետ համագործակցության նոր ծրագրերի մշակման անհրաժեշտության վրա: Նախարարը նաև խոստացավ օժանդակել կոլեկտիվին՝ տեխնիկայի թարմացման աշխարհային ընթացքին:

ԾՐԱԳԻՐ

ՆԵՐԿՐՈՒՄ ԿԱԹ ԱՐՏԱԳՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Դեռևս 2013 թ.-ի դեկտեմբերին, «Դե Լավալ» ընկերության Ուկրաինայի, Մոլդովայի և Հարավային Կովկասի 3 հանրապետությունների ներկայացուցիչները (դիլերները) Կիևում մասնակցեցին «Դե Լավալ»-ի ներկայացուցիչների կոնֆերանսին: Բացի ընկերության դիլերներից, ֆորումի ընթացքում, հինգ երկրների կաթ արտադրող արդյունավետ և զարգացող փոփոխություններից ժամանած ներկայացուցիչները քննարկեցին և ամփոփեցին 2013 թ. հաջողություններն ու մարտահրավերները, որոնք առնչվում էին կթի սարքերի տրամադրման գործընթացներին:



Միջոցառմանը ԶԱՐԴ Ազոյր-Սերվիս ՓԲԸ-ն արժանացավ «2013 լավագույն ներկայացուցիչ» տիտղոսին՝ ցուցաբերած աճի առավելագույն ցուցանիշների, ինչպես նաև «Դե Լավալ»-ի տեսակետներն ու լուծումներն արդյունավետ ներկայացնելու համար, որը միաժամանակ բերում է Հայաստանյան շուկայի ներուժի զարգացմանը: Կազմակերպության կողմից միջոցառմանը մասնակցում էր գյուղատնտեսական սարքավորումների վաճառքի և խթանման գծով մենեջեր Արեգ Գեղեղյանը: Այս պարզևսարկումը

արդյունք է CARD-ի աշխատակիցների միացյալ ջանքերի, որոնք այս տարիների ընթացքում աշխատել են նվիրաբերող դրան գումարած բոլոր մարզերի ֆերմերների շարունակական աջակցությունն ու ոգեշնչումը:

2013 թ.-ը «ԶԱՐԴ Ազոյր-Սերվիս» ՓԲԸ-ի համար դարձավ հիշարժան մեկ այլ հեթաբքերի նվաճումով ևս: 100-րդ կթի շարժական ազդեցությունը հեթաբքական անգամ պետք է տրվեր լիզինգով, սակայն ընկերությունը որոշեց դա նվիրել այն ֆերմերին, որի անձնական նվաճումները մեքենայացված կթի առումով, համընկնում են համայնքի նվաճումների հետ:

Հաղթող ճանաչվեց Նորայր Ալեքսանյանը՝ Սառնակունք գյուղի ֆերմեր, 5 երեխաների հայր և 8 կաթնատու նախրի տեր: «Սա մեծ օգնություն է ինձ համար, որը հնարավորություն կտա մի քիչ ավելի ազատ ժամանակ անցկացնել ընտանիքիս հետ», - ասաց Նորայրը, երբ սարքի հետ ստանում էր շահագործման և սպասարկման մանրամասն ցուցումները:

Շարժական կթի սարքերը մեծ կարևորություն և պահանջարկ ունեն Հայաստանի կաթ արտադրող փոփոխություններում: Դրանք ոչ միայն թեթևացնում են գյուղացու ծանր աշխատանքը, այլև միտված են բարելավելու կթի հիգիենան և սանիտարական պայմանները ֆերմաներում:

Հայաստանում CARD-ը, «Դե Լավալ»-ի մասնագետների հետ համատեղ, ներկայացրել է կթի տեխնոլոգիան սկսած 2006 թ.-ից: Միսիանի տարածաշրջանի առաջին ֆերմերները մեքենայացված կթի տեխնոլոգիան սկսեցին կիրառել 2009 թ.-ի վերջերին: Հաջողությունը շուրջով տարածվեց ամբողջ շրջանով և, 4 տարի անց, 2013 թ.-ին, «Դե Լավալ» ընկերության կողմից արտադրվող կթի ազդեցություններն արդեն կիրառվում էին տարածաշրջանի բոլոր գյուղերում՝ շնորհիվ Սառնակունք գյուղում հիմնված Գյուղատնտեսական և Անասնաբուժական Սպասարկման Կենտրոնի (ԳԱՍԿ):

Կենտրոնի մենեջեր Սուրեն Վարդանյանը փորձառու անասնաբույժ է, որը մատուցում է կենդանիների արհեստական սերմնավորման և կաթ արտադրող փոփոխության հետ կապված այլ ծառայություններ: Հարկ է նշել, որ նրա շնորհիվ էր նաև, որ կթի շարժական ազդեցությունները մեծ ճանաչում գտան տարածաշրջանում:

Այսօրվա դրությամբ, շատ մոտ էնք 200-րդ կթի սարքը Միսիանի տարածաշրջանում նվիրաբերելու մտքին: Շուրջով կնշենք մեր հաջորդ նվաճումը, այս անգամ արդեն մեկ այլ փոփոխությունում:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ

ԱՌՈՂՋԱՊԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Միավորված ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամի՝ ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից շուրջով Տավուշի մարզում կմեկնարկի երեխաների սնուցմանը վերաբերող առողջապահական մեծ ծրագիր: Ծրագիրն իր մեջ ներառում է մի քանի բաղադրիչ: Առաջին բաղադրիչը նախատեսում է մարզի բժշկական անձնակազմի, մասնավորապես՝ մանկաբույժների և ընտանեկան բժիշկների

լայնածավալ վերապատրաստում, նրանց ազգային ուղեցույցների տրամադրում, որոնք պարունակում են բժշկի համար անհրաժեշտ նյութեր, բաղադրարժույթ, սննդակարգեր: Երկրորդ բաղադրիչով, մարզի քաղաքային և մի քանի խոշոր գյուղական համայնքներում ծնողների համար կկազմակերպվեն կրթության դպրոցներ, որոնք միտված են ուղղորդելու նրանց՝ երեխաների սնուցումը ճիշտ և մատչելի իրականացնելու համար: Երրորդ բաղադրիչը նախատեսում է ժամանակակից տեխնոլոգիաների համահունչ տեղեկատվական նյութեր, բուժիմ-

նարկների սպասարհներում կրեդիտավորման էկրաններ, որոնց օգնությամբ, գովազդային վազող կադրերի միջոցով, կմատուցվեն տեղեկատվական նյութերը:

Տավուշի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Կարինե Դովաթթեկյանը նշել է, որ մարզն առաջիններից մեկն է անցել կրծքով սնուցման ազգային ծրագրին, իսկ այսօր արդեն ժամանակն է անցնելու երեխայի հավելյալ սնուցումը ճիշտ կազմակերպելու այս նոր ծրագրին:

Տավուշի ԳԱՍԿ

ՀՈՒՐԵԼՅԱՆ

ԱՐԺԱՆԻ ՎԱՍՏԱԿ

Լրացավ հայրնի անասնաբույժ, գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գրիգորի Նիկոլայի Բաղդասարովի ծննդյան 85-ամյակը:



Ամանի գիտնականը ծնվել է 1929 թ. փետրվարի 16-ին, Թբիլիսի քաղաքում: 1947 թ.-ին ընդունվել է Երևանի անասնաբուժական - անասնաբուժական ինստիտուտի անասնաբուժական ֆակուլտետ, ավարտել է 1952 թ.:

Ինստիտուտ ավարտելուց հետո՝ որպես ավագ անասնաբույժ, գործուղվել է աշխատանքի Սևանի շրջանի Սեմյոնովկա գյուղի տոհմային տնտեսություն: Այնուհետև աշխատանքի է անցել Երևանի անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտի մանր անասնաբուժության ամբիոնում՝ որպես ասիստենտ: 1961 թ. պաշտպանել է թեկնածուական թեզը, իսկ 1964 թ. ստացել դոցենտի կոչում: 1974 թ. ընտրվել է անասնաբուժական ֆակուլտետի դեկան: Այդ նույն պաշտոնում նա վերընտրվել է 1977 և 1980 թվականներին:

Դոկտորական ատենախոսությունը պաշտպանելուց հետո՝ 1976 թ.-ին, Գ.Ն. Բաղդասարովին շնորհվել է պրոֆեսորի կոչում: Այդ տարիներին, պրոֆեսոր Բաղդասարովի ղեկավարությամբ, որ համարվում էր անասնաբուժական ֆակուլտետի դեկանի և մանր անասնապահության ամբիոնի պրոֆեսորի պաշտոնները, անասնաբուժական ֆակուլտետում կատարվել է մեծ աշխատանք՝ ներդրվել են նոր ուսումնական պլաններ, հիմք է դրվել նոր մասնագիտության՝ անասնաբույժ ինժեներների պատրաստմանը, կատարելագործվել է ուսումնական գործընթացը, թարմացվել են ուսանողների ուսումնական և արտադրական փորձաշրջանների ծրագրերը և այլն:

Հմուտ մանկավարժն իր գործունեության ընթացքում մեծ ուշադրություն էր դարձնում ուսանողների դաստիարակչական աշխատանքներին, նրա անմիջական հետևողականության շնորհիվ, ինստիտուտում սկսել են մեծ ուշադրություն դարձնել ուսանողների հետ համատեղ հեթազոտական աշխատանքներին, որը հեթազոտում դառնալու էր ապագա մասնագետների կայացման լավագույն միջոց:

Պրոֆեսոր Գ. Բաղդասարովի շուրջ կենդանի գիտական գործունեությունն ընդգրկել է հանրապետությունում անասնաբուժության զարգացման տեսական և գործնական նշանակություն ունեցող մի շարք հիմնահարցեր: Նրա գրչին են պատկանում 150-ից ավելի գիտական աշխատանքներ, այդ թվում՝ մի շարք մենագրություններ, գրքուկներ ու հանձնարարականներ: Նրա ղեկավարությամբ և խորհրդավորությամբ պաշտպանվել են դոկտորական և թեկնածուական ատենախոսություններ: Նա մշտական սերտ կապ է ունեցել անասնաբուժական արտադրության հետ՝ գիտամեթոդական և մասնագիտական օգնություն ցույց տալով հանրապետության ոչխարաբույծներին, նախկին ԽՍՀՄ տարբեր հանրապետություններում պատշաճ մակարդակով ներկայացրել հարազատ ԲՈՒՀ-ը:

1985-1989 թթ. պրոֆեսոր Բաղդասարովը նշանակվել է Հայաստանի հանրապետական բարձրագույն դպրոցի ուսումնամեթոդական աշխատանքի գծով պրոռեկտոր, որտեղ էլ ավելի մեծ թափով իր լուսն է ներդրել գյուղատնտեսության ոլորտի բարձրակարգ մասնագետներ պատրաստելու և վերապատրաստելու գործին: 1989 թ., վերադառնալով հարազատ ԲՈՒՀ՝ շարունակել է պրոֆեսորի իր սիրած աշխատանքը մանր անասնապահության ամբիոնում, իսկ 1993թ. մրցույթով ընտրվել է նույն ամբիոնի վարիչ:

Աշխատած բոլոր հաստատություններում պրոֆեսոր Բաղդասարովը ցուցաբերել է բարձր արհեստավարժություն, սկզբունքայնություն, անաչառություն: Նա շատ բարյացկամ և բարեսիրտ անձնավորություն է, միշտ կանգնած է եղել օգնության կարիք զգացող ուսանողի, դասախոսի, գիտնականի, ընկերոջ և հարևանի կողքին: Նա իր հանրագիտարանային գիտելիքները հաճույքով կիսում է իր զրուցակցի հետ:

Պրոֆեսոր Բաղդասարովը, ներկայումս գտնվելով վաստակած հանգստի մեջ՝ ակտիվ կապ է պահպանում իր հարազատ կուլեկտիվի հետ, երբեք չի թերանում օգնելու և կրթելու հարցում:

Շնորհավորում ենք մեր սիրելի ուսուցչին՝ ծննդյան օրվա կապացությամբ, մաղթում քաջ առողջություն և երկար տարիների կյանք:

ՀԱՍԻ-ի մասնավոր անասնաբուժության ամբիոնի կուլեկտիվ

ՊԱՇՏՊԱՆՆԵՐ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՐԳԱՅՆԵՔ ԵՎ ՀՈՐԱՅՆԵՔ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ

Բնության համաշխարհային հիմնադրամը (WWF) հիմնադրվել է 1961 թ.-ին, և ներկայումս իր գործունեությունը ծավալում է աշխարհի ավելի քան 100 երկրներում՝ ընդգրկելով 5000-ից ավելի աշխարհակիցների: Կազմակերպության քարտուղարությունը գտնվում է Շվեյցարիայի Գլան քաղաքում: WWF-ի առաքելությունն է կասեցնել երկրագնդի բնական միջավայրի դեգրադացումն ու կառուցել այնպիսի ապագա, որտեղ մարդիկ ներդաշնակ կապրեն բնության հետ: Կովկասյան տարածաշրջանում այն իր գործունեությունը սկսել է 1992 թ.-ից, իսկ Հայաստանում՝ 2002 թ.-ից: 2006 թ.-ից WWF հայաստանյան մասնաճյուղը պաշտոնապես գրանցվել է Հայաստանում՝ հանդիսանալով WWF Կովկասյան ծրագրային գրասենյակի մի մաս:

WWF հայաստանյան մասնաճյուղի տնօրեն Կարեն Մանվելյանը նշեց, որ հիմնադրամի գործունեության հիմնական ուղղություններն են՝ զարգացնել և հզորացնել Հայաստանի բնության հարուկ պահպանվող տարածքները (ԲՀՊՏ)՝ արգելոցները, ազգային պարկերն ու արգելավայրերը, վերականգնել էկոհամակարգերը, իրականացնել կլիմայի փոփոխության ազդեցության մեղմացմանն ուղղված գործողություններ, ներդրել տնտեսական մեխանիզմներ՝ տեղական համայնքներում այլընտրանքային կենսամիջոցների սպեղծման համար: Խթանել բնական պաշարների կայուն օգտագործումը և, պահպանելով կենսաբազմազանությունը, աջակցել բնապահպանական իրազեկությանն ու կրթությանը:



յանը ներկայացրեց, որ հիմնադրամն աշխարհում և կարող է նաև կլիմայի փոփոխության մեղմացման ուղղությամբ՝ իրականացնելով վերջինիս նկատմամբ անտառային էկոհամակարգերի հարմարվողականության բարձրացման միջոցառումներ: Մասնավորապես՝ WWF-հայաստանյան մասնաճյուղն աշխատում է անտառվերականգնման և միաբարձր ծառայությունների տրամադրման գործում: Ուղղությամբ, որի արդյունքում դրանց կփոխարինեն կլիմայի փոփոխության նկատմամբ ավելի կայուն խառը, լայնատերև անտառները: Ս. Գալստյանը նշեց անտառային ծրագրերի

WWF հայաստանյան մասնաճյուղի առաջնահերթ խնդիրներից է՝ վրանգված տեսակների պահպանությունը. դրանց շարքում են՝ կովկասյան ընձառյուծը, հայկական մուֆլոնը, բեզոարյան այծը, գորշ արջը և այլն:

Վերջին տասը տարվա ընթացքում WWF-ը զգալի ջանքեր է ներդրել Կովկասում ընձառյուծի կարգավիճակի գնահատման ուղղությամբ: Շահագրգիռ կողմերի հետ համատեղ, հիմնադրամը մշակել է «Ընձառյուծի պահպանության տարածաշրջանային ռազմավարությունը» և Հայաստանի համար ազգային գործողությունների ծրագիրը: Հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի տնօրենը հավելեց, որ երկրի հարավում սպեղծվել է չորս նոր ԲՀՊՏ («Արևիկ» ազգային պարկը, «Զանգեզուր» և «Խուսպուրի» պետական արգելավայրերը և «Պիլիշիկ» պահպանվող լանդշաֆտը), որոնք ընդգրկում են ընձառյուծի հիմնական ապրելավայրերը: Դրանց ընդհանուր տարածքը 73229 հա է, ինչը կազմում է հանրապետության տարածքի 2.5 %-ը: WWF-ի և Հայաստանի ու Վրաստանի կառավարությունների համատեղ ջանքերով, Գերմանիայի կառավարության ֆինանսական աջակցությամբ և KfW բանկի միջոցով, Կովկասի տարածաշրջանում սպեղծվել է առաջին անդրսահմանային պահպանվող տարածքը. Հայաստանում՝ «Արփի լիճ» և Վրաստանում՝ «Ջավախեթի» ազգային պարկերը:



Վրանգված տեսակների պահպանությունն ուժեղացնելու նպատակով հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղն աջակցել է «Խոսրովի անտառ» և «Շիկահող» պետական արգելոցներին, «Արևիկ» ազգային պարկին, «Զանգեզուր» և «Խուսպուրի» արգելավայրերին՝ տրամադրելով նրանց սարքավորումներ և համապատասխան շինություններ (պահակատներ՝ պահպանության աշխատողների համար, ամենազանց ավտոմեքենաներ, ճանապարհային արգելափակոցներ, հեռադիտակներ, ֆոտոխցիկներ, հանդերձանք և այլն): Հիմնադրամը հարուկ ուշադրություն է դարձնում ԲՀՊՏ-ներին կից համայնքների տեղական բնակչությանը: WWF-ն տեղական համայնքներում իրականացնում է այլընտրանքային կենսամիջոցների սպեղծման ծրագրեր՝ էկոտուրիզմի (հյուրարկներ և էկոթրոլինգներ) և մեղմապահության զարգացում, պրոպագանդայի հիմնում, անհրաժեշտ գյուղատնտեսական տարածքում և այլն:

իրականացման համար ավելի փնտրելու և վերջիններիս ավարտից հետո գործողությունների շարունակականության ապահովման կարևորության մասին: Ըստ ծրագրի համակարգողի՝ Եվրամիության կողմից ֆինանսավորվող անտառի տրամադրման ծրագրով, լավ առաջընթաց է գրանցվել առաջադրված նպատակների իրականացման ուղղությամբ՝ ներառյալ Լոռու և Տավուշի մարզերում գտնվող պիլոտային տարածքներում գործողությունների իրականացումը (ընդհանուր՝ 150 հա, որից՝ 78 հա՝ Տավուշի մարզում, 72 հա՝ Լոռու մարզում), ինչպես նաև համայնքային ներգրավված դաշտային գործողություններում, իրազեկության բարձրացումն ու տեղեկությունների տրամադրումը: Անտառի տրամադրման ծրագիրը տարածաշրջանային է, այն WWF-ի կողմից իրականացվում է Կովկասի 3 երկրներում: Այն Հայաստանում կլիմայի փոփոխությանն արձագանքող և ԵՄ կողմից ֆինանսավորվող 10 ծրագրերից մեկն է: Անտառները, ճիշտ կառավարվելու դեպքում, կարևոր դեր կունենան կլիմայի փոփոխության մեղմացման հարցում:

Անտառի տրամադրման ծրագիրը հիմնվում է WWF-ի հայաստանյան մասնաճյուղի կողմից նախկինում իրականացված անտառային ծրագրերի փորձի վրա: Այս ծրագրով ցուցադրական պիլոտային տարածքներում ներդրվում և փորձարկվում են առաջադրված անտառաբուծական մեթոդներ: Ծրագիրն արձագանքում է նաև էկոհամակարգային ծառայությունների թեմային, քանի որ պիլոտային տարածքներին կից համայնքներն ապագայում կունենան ավելի առողջ և բազմազան անտառներ, որոնք կապահովեն նաև մաքուր ջուր և օդ: Ծրագիրը շար կարևոր է, քանի որ այն նպաստում է ավելի



կենսունակ անտառների սպեղծմանը՝ նկատի ունենալով կլիմայի փոփոխությունը: Ծրագրով կազմակերպվել է ուսումնական ուղևորություն Գերմանիա՝ անտառի տրամադրման գործի փորձի ծանոթանալու նպատակով: Կարևոր է նաև, որ տեղական բնակչությունն ակտիվորեն մասնակցում է ծրագրի իրականացմանը՝ ստանալով նաև անմիջական օգուտներ:

Ծրագրի շրջանակներում կազմակերպվել են բազմաթիվ աշխարհային հանդիպումներ և դաշտային միջոցառումներ՝ ուղղված ծրագրի տեսանկյունից ապահովմանը և տեղեկությունների տրամադրմանն ու փոխանակմանը: Դրանցում ներգրավվել են ծրագրի պիլոտային տարածքներին կից տեղական համայնքները, մասնավորապես՝ Լեռնանցք և Ստրամեջ համայնքները, Լոռու մարզում և Կողբ համայնքը՝ Տավուշի մարզում, կրթական և գիտական հաստատությունները, պետական, ոչ կառավարական և միջազգային կազմակերպությունները: Ծրագրի համակարգողը հավելեց, որ քննարկվել են հարցեր, որոնք վերաբերում են անտառի տրամադրման ծրագրի նպատակահարմարությանն ու կարևորությանը, համայնքների հետագա ներգրավմանը դաշտային աշխարհային տարածքներում, դաշտային աշխարհային հետ կապված խնդիրներին, դրանց լուծման հնարավորություններին և այլն:

Ծրագրի շրջանակներում ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Հայանտառ» ՊՈԱԿ-ին նվիրաբերված սարքավորումներն ու գործիքները նույնպես օգտագործվում են համապատասխան անտառտնտեսությունների կողմից՝ անտառի տրամադրման գործում: 2013 թ.-ի աշնանը, «Հայանտառ» ՊՈԱԿ-ին ծրագրի շրջանակներում տրամադրվել է լրացուցիչ տեխնիկական աջակցություն՝ ընթացիկ և պլանավորված գործողություններում օգտագործելու նպատակով: Ծրագրով առանձնահատուկ կարևորվում են մարդկային հզորությունների սպեղծման գործողությունները, որոնց շարքում պետք է նշել 2014 թ.-ի փետրվարի 18-ին կազմակերպված ուսուցումը՝ կլիմայի փոփոխության և անտառի տրամադրման ծրագրի թեմայով, ինչպես նաև անտառի տրամադրման ուղեցույցը, որը մշակման փուլում է և հրատարակվելու է նաև հայերեն լեզվով՝ համապատասխան մասնագետներին տրամադրելու նպատակով:

Ծրագրի դաշտային աշխարհային մասնակցող համայնքների ներկայացուցիչներին տրամադրվել են Եվրամիության կողմից ֆինանսավորվող ծրագրով պատրաստված, ծրագրի տեսանկյունից անապահով փաթեթներ. դրանցից յուրաքանչյուրում առկա են՝ կտրից պայուսակ, նոթաբեր, գրիչ, շապիկ, գլխարկ և բաժակ, ինչպես նաև՝ WWF հայաստանյան մասնաճյուղի կողմից հրատարակված ուղորդիչ առնչվող այլ նյութեր:

Հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի տնօրեն Կարեն Մանվելյանը կարևորեց, որ WWF հայաստանյան մասնաճյուղը չէր կարող հասնել հաջողությունների՝ առանց դոնորների և գործընկերների աջակցության և համագործակցության. դրանք են՝ ՀՀ բնապահպանության նախարարությունը, ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Հայանտառ» ՊՈԱԿ-ը, EU, CEPF, UNDP, GEF, Նորվեգիայի կառավարությունը, CNF, Գերմանիայի կառավարությունը (BMZ և BMU), KfW բանկը, WWF Գերմանիան, WWF Շվեյցարիան, WWF Նորվեգիան, Orange Հայաստանը, HSBC Հայաստանը, Պրոմեթեյ Բանկը և այլն:

Լիանա Շախնազարյան

ՄԵՐՄՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՄԽՏՈՐԻ ԵՎ ՍՈՒԽԻ ՄԵՐՄՆԱԲՈՒԾՅԱՈՎ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հանրապետությունում, սերմանյութի պակասի հետևանքով, գարնանային սխտորի և սոխի մշակությամբ գրեթե չեն զբաղվում: Մինչդեռ բնակչությանն ամբողջ տարին թարմ սխտորով բավարարելու համար, աշնանային տնկումներին զուգահեռ, անհրաժեշտ է նաև դրանց գարնանային մշակությունը:

Սոխի սերմաբույսով աճեցրած սերմացուն սերմով աճեցրածի համեմատ, 2-3 շաբաթ շուտ է հասունանում, ինչի հետևանքով տնկվելուց հետո 2-3 անգամ ավելի արդյունավետ են օգտագործվում տնկանիկական միջոցները: Վաղ տնկումների ժամանակ գրեթե վերանում են հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումները և ամենակարևորը՝ սերմաբույսից սրացված սոխի բերքատվությունն ավելի բարձր է լինում, քան՝ սերմից աճեցրածինը:

Անհրաժեշտ է գարնանային աշխատանքները սկսել հնա-

րավորինս վաղ ժամկետում: Հողի նախացանքային մշակումից հետո փոքրիկ և ակոսահանիչի միջոցով 10-15 սմ խորությամբ բացված ակոսի մեջ 3-5 սմ խորությամբ տնկել սխտորի և սոխի սերմաբույսերը՝ դրանց միջև պահպանելով 8-10 սմ հեռավորություն: Ակոսների միջև հեռավորությունը վերցնել 40 սմ, իսկ երկարությունը և ուղղությունն այնպես հաշվարկել, որ ջուրը դանդաղ հոսի և այդ ընթացքում դժվարություններ չառաջանան: Տնկման այս եղանակի դեպքում դաշտում շատ խոնավություն է կուտակվում, բույսերի կողմից ավելի արդյունավետ են օգտագործվում պարարտանյութերը և հեշտանում է խնամքի աշխատանքների մեքենայացումը:

Այս եղանակով մշակության ժամանակ 1000 մ² տարածքի համար կապահանջվեն 18 հազար սխտորի բույս և նույնքան էլ սոխի սերմաբույս:

Սոխի և սխտորի համար լավագույն նախորդներ են համարվում դոմագգիները, թիթեռնածաղկավորները, կաղամբագինները և այլն: Այս մշակաբույսերը, հատկապես՝ աճի սկզբնական շրջանում, պահանջկոտ են հողի բերրության և խոնավության նկատմամբ: Այդ պատճառով տնկանյութը պետք է տնկել օրգանական նյութերով հարուստ, մոլիբդենի և ֆոսֆորի պարունակող գերծ հողերում: Մինչև տնկելը, սխտորի պտուղներն ախտահանել աղաչի (1 ճաշի գդալ՝ 2լ ջրին) այնուհետև պղնձարջասպի լուծույթում (1 թեյի գդալ՝ 2 և ջրին), 3-ական րոպե սերմանյութն ընկղմելով այդ լուծույթներում:

Սխտորը և սերմաբույս սոխը սնուցել ազոտական պարարտանյութով (ամոնիակային սելիտրա՝ 150 կգ/հա-ին): Մուցումից և ջրելուց հետո անհրաժեշտ է կապարել քաղահան-փխրեցում: Հաջորդ սնուցումը պետք է տալ գլխիկների ձևավորման սկզբում: Սխտորից և սոխի սերմաբույսից բարձր բերք է սրացվում, երբ վեգետացիայի սկզբնական շրջանում հողաշերտի 40 սմ խորության վրա

Սերմաբույս սոխի հավասարաչափ ու արագ աճի համար տնկելուց առաջ վզիկի չոր մասը կտրել՝ չվնասելով ծիլը: Այնուհետև՝ այն 10-12 ժամ թրջել սենյակային ջերմության ջրում:

Ծիլերի դուրս գալուն պես,



Այս եղանակով մշակության ժամանակ 1000 մ² տարածքի համար կապահանջվեն 18 հազար սխտորի բույս և նույնքան էլ սոխի սերմաբույս:

ՆՈՐ ՏԵՆՆՈՒՈՒԳԻՎՆԵՐ

ԽՈՍՏՈՒՄՆԱԼԻՑ ՀԵՌՄՆԿԱՐ

Առաջիկայում բույսերը վնաստու միջատներից պաշտպանելու բնագավառում կարող է պարզապես հեղափոխություն տեղի ունենալ: Ամերիկյան կենսաբանները միջատների օրգանիզմում հայտնաբերել են մի նոր սպիտակուց, որն անվանել են նատալիզին: Այն կանոնավորում է նրանց սեռական ակտիվությունը բազմացման շրջանում: «Եվ հետո չէ այն ժամանակը, երբ կսկսվեն նյութեր, որոնց միջոցով կարգելափակվի նատալիզինի ակտիվությունը կամ սինթեզը», - նշել է ամերիկյան հանրահայտ Proceedings of the National Academy of Science գիտական ամսագիրը:



Այն ժամանակվանից ի վեր, ինչ անցյալ դարի կեսերին սինթեզվեցին քլորոֆոսն ու ԴԴՏ-ն, վնասատուների դեմ պայքարի բնագավառում սկզբում հաջողություններ արձանագրվեցին, սակայն, շուտով պարզ դարձավ, որ բացի նրանից, որ միջավայրն ահավոր աղտոտվում է, այլև չոչնչացված միջատները հարմարվում են դրանց: Դրանից հետո գիտնականներն սկսեցին միջատների դեմ պայքարի նոր եղանակներ փնտրել՝ այդ նպատակով օգտագործելով դրա համար բակտերիաներ և վնասատուների գենետիկորեն մոդիֆիկացված տեսակներ: Ամերիկյան հետազոտություններն իրենց շարունակությունն ունեցան Կորեայի Զվանջու քաղաքում, ուր տեղի Գիտության և տեխնոլոգիաների ինստիտուտի մի խումբ հետազոտողներ, Յեն-Չուն Կիմի գլխավորությամբ, առանձնացրեցին նատալիզինի հետ առնչվող գեները և ՌՆԹ-ն՝ բացահայտելով այն ողջ համակարգը, որը նյարդային հանգույցներում կարողանում է կանոնավորել միջոցով, որոնք ազդում են միտոքոնդրիալ ԴՆԹ-ի վրա, հնարավոր է սահմանափակել արունների բազմացման կարողությունը՝ դրանով իսկ կարգավորելով վնասատուների, կրծողների և այլ անցանկալի եակների թվաքանակը: Հետազոտությունների դեկավար Նեյլ Գեմմելը վստահեցնում է, որ գյուտը հավասարապես օգտակար կարող է լինել գյուղատնտեսության, մարդու առողջության, կենսաբազմազանության համար՝ սահմանափակելով վնասատուների համակցությունները, որոնք հիվանդություններ են տարածում կամ արժեքավոր կենսառեսուրսներ ոչնչացնում: Հաշվի առնելով, որ միայն տենդից (մալարիայից) տարեկան մեկ միլիոն մարդ է մահանում, անկում են գյուղատնտեսական կենդանիներ, տուժում է կենսաբազմազանությունը, կրծողներն ուտում կամ փչացնում են սննդամթերքի մինչև 17 %-ը, ապա հետազոտում պարզ կդառնա, թե գյուտն անելուց հետո դրա կիրառումն ու տարածումը որքան սպասված են:

Այն ժամանակվանից ի վեր, ինչ անցյալ դարի կեսերին սինթեզվեցին քլորոֆոսն ու ԴԴՏ-ն, վնասատուների դեմ պայքարի բնագավառում սկզբում հաջողություններ արձանագրվեցին, սակայն, շուտով պարզ դարձավ, որ բացի նրանից, որ միջավայրն ահավոր աղտոտվում է, այլև չոչնչացված միջատները հարմարվում են դրանց: Դրանից հետո գիտնականներն սկսեցին միջատների դեմ պայքարի նոր եղանակներ փնտրել՝ այդ նպատակով օգտագործելով դրա համար բակտերիաներ և վնասատուների գենետիկորեն մոդիֆիկացված տեսակներ: Ամերիկյան հետազոտություններն իրենց շարունակությունն ունեցան Կորեայի Զվանջու քաղաքում, ուր տեղի Գիտության և տեխնոլոգիաների ինստիտուտի մի խումբ հետազոտողներ, Յեն-Չուն Կիմի գլխավորությամբ, առանձնացրեցին նատալիզինի հետ առնչվող գեները և ՌՆԹ-ն՝ բացահայտելով այն ողջ համակարգը, որը նյարդային հանգույցներում կարողանում է կանոնավորել միջոցով, որոնք ազդում են միտոքոնդրիալ ԴՆԹ-ի վրա, հնարավոր է սահմանափակել արունների բազմացման կարողությունը՝ դրանով իսկ կարգավորելով վնասատուների, կրծողների և այլ անցանկալի եակների թվաքանակը: Հետազոտությունների դեկավար Նեյլ Գեմմելը վստահեցնում է, որ գյուտը հավասարապես օգտակար կարող է լինել գյուղատնտեսության, մարդու առողջության, կենսաբազմազանության համար՝ սահմանափակելով վնասատուների համակցությունները, որոնք հիվանդություններ են տարածում կամ արժեքավոր կենսառեսուրսներ ոչնչացնում: Հաշվի առնելով, որ միայն տենդից (մալարիայից) տարեկան մեկ միլիոն մարդ է մահանում, անկում են գյուղատնտեսական կենդանիներ, տուժում է կենսաբազմազանությունը, կրծողներն ուտում կամ փչացնում են սննդամթերքի մինչև 17 %-ը, ապա հետազոտում պարզ կդառնա, թե գյուտն անելուց հետո դրա կիրառումն ու տարածումը որքան սպասված են:

Մեկ այլ ուղղությամբ են փորձում նույն խնդրի լուծմանը հասնել Նոր Չելանդիայում: Օտագո

ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ

ԿԱՅԱՑԱՎ «ԿՈՏԱՅՔԻ ԶՄԵՌ»-Ը

Վերջերս Կոտայքի մարզում տեղի ունեցավ «Կոտայքի ձմեռ» մարզամշակութային տոնակատարությունը՝ մարզի համայնքների ներկայացուցչական պատվիրակությունների մասնակցությամբ:

Մարզի Լեռնահիստ համայնքի մուտքին հարող հրապարակում կայացած տոնակատարությանը ներկա էին ՀՀ Կոտայքի մարզպետ Կ. Շահգալոյանը, Կոտայքի թեմի առաջնորդ Տեր Առաքել արքեպիսկոպոս Քարամյանը, մարզպետ Կոտայքի պաշտոնատար անձինք և համայնքների ղեկավարներ:



Մարզային տոնախմբությունը մեկնարկեց Հայ Առաքելական Եկեղեցու Կոտայքի թեմի առաջնորդի օրհնության և ՀՀ Կոտայքի մարզպետի բացման խոսքերով, որոնց հաջորդեց Սուրբ Սարգսի տոնի կապակցությամբ կազմակերպված նորաստեղծների օրհնության կարգը: «Կոտայքի ձմեռ» մարզամշակութային տոնակատարության շրջանակներում կազմակերպվեցին նաև՝ դահուկավազքի, բազկամարտի, ըմբշամարտի, պարանի ձգման, ծիսասահակների, ձնեքանդակների և այլ մրցույթներ: Միջոցառման ընթացքում մարզի համայնքները ներկայացրել էին իրենց մշակութային տաղավարներով, ինչպես նաև լավագույն պարային խմբերով ու անհատ կատարողներով:

Տոնակատարության ավարտին Կոտայքի մարզպետի կողմից պարգևատրվեցին բոլոր մրցանակներից հաղթող ձանաչված մարզիկներն ու թիմերը, ինչպես նաև ակտիվ մասնակցություն ունեցած մի շարք համայնքներ: «Կոտայքի ձմեռ» մարզամշակութային տոնակատարությունն ամփոփվել է ավանդական խորովով:

Կոտայքի ԳԱՄԿ

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ԱՇՆԱՆԱՑԱՆ ՀԱՅԱՀԱՏԻԿՆԵՐԻ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Աշնանացանների բերքի ձևավորումը սկսվում է վաղ գարնանից: Ուստի, կարևորվում են դրանց հետձմեռային վիճակի ստուգումը, գարնանային մշակության աշխատանքների ժամանակին ու որակով կատարումը:

Աշնանացանները հաճախ տուժում են աշնանային, ձմեռային և վաղ գարնանային ցրտահարություններից: Ուժեղ սառնամանիքների հետևանքով, հողը զգալի խորության վրա սառչում է, իսկ որոշ վայրերում բացասական ջերմաստիճանը, բույսերի թփակավման հանգույցի խորությամբ և, նույնիսկ, ավելի խորը իջնելով՝ հասնում է ծայրագույն մակարդակի:

Վնասված և խիստ նոսրացած ցանքատարածություններում

Ելնելով հողային սահմանափակ հնարավորություններից, հացահատիկի արտադրության ավելացումը հանրապետությունում պետք է կատարվի մշակվող ցանքատարածությունների բերքատվության առավելագույն բարձրացման անխնայատրելի կորուստների վերացման հաշվին:

անհրաժեշտ է հեկտարին՝ ազդող նյութի հաշվով, տալ 150 կգ ազոտ: Արարատյան հարթավայրի նախալեռնային գոտու ոռոգելի հողերում, 50-55 g/ha բերքատվության դեպքում, շարահերկ մշակաբույսերից հետո սնուցումը կատարել 120 կգ/ha, բազմամյա խոտերից հետո՝ 90 կգ/ha սահմանված չափաբաժիններով:

Գորշ, անջրդի հողերում նշված չափաբաժինները պետք է կրճատել 30-40 տոկոսով:

Արարատյան հարթավայրի նախալեռնային գոտու շագանակագույն անջրդի հողերում (25-30g/ha բերքատվության դեպքում) հացահատիկային նախորդներից հետո սնուցումը կատարվում է 90, ցելերից և բազմամյա խոտաբույսերից հետո՝ 60 կգ/ha չափաբաժիններով:

Լեռնային շագանակագույն և սակավահումուտ անջրդի հողերում, 25-30 g/ha բերքատվության դեպքում, ցելերից և բազմամյա խոտերից



անհրաժեշտ է կատարել վերացանք՝ երկրակամ գարնանային հացահատիկային մշակաբույսերով:

Խորհուրդ է տրվում ցանքը կատարել գարնան փոցխումից անմիջապես հետո՝ աշնանացանների շարքերին հակառակ ուղղությամբ կամ անկյունազծով: Եթե աշնանացանի ցանքերում գարնանը մեկ քառակուսի մետրի վրա մնացել է 220-250 բույս, և գարունն էլ, վաղ սկսվելով, նպաստավոր է, ապա անհրաժեշտ է ստեղծել լավ ագրոֆոն:

Աշնանից լավ թփակավման և բավարար ձմեռած ցանքերում դաշտի միանվագ փոցխումը դրական արդյունք է տալիս:

Ուժեղ ամրացած հողերում, որտեղ բույսերի թփակավումը լավ է, 2 երես փոցխելու դեպքում արդյունքն ավելի մեծ է լինում: Ցանքերը, որտեղ բույսերը թույլ են զարգացած և աշնանը չեն թփակավել, փոցխումը պետք է հետաձգել, այն կատարելով թփակավման փուլում:

Աշնանացանների ցանքերում, առաջին իսկ հնարավորություն դեպքում, պետք է կատարել ազոտական պարարտանյութերով սնուցում: Նոսրացած ցանքերում ազոտի չափաբաժինը կարելի է բարձրացնել 25-30 տոկոսով: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել ազոտի համահավասար ներմուծմանը, հաշվի առնելով յուրաքանչյուր հողատարածքի առանձնահատկությունները՝ նկատի ունենալով աշնանը տրված պարարտանյութերի տեսակն ու չափաբաժինը, աշնանացանի նախորդը, հողի պահուստային խոնավությունը, ջրով և անջրդի պայմանները և այլն:

Արարատյան հարթավայրի գորշ, մարգագետնային ոռոգելի հողերում աշնանացան ցորենի 65-70 g/ha բերք ապահովելու համար,

հետո սնուցել 60, հացահատիկային մշակաբույսերից հետո՝ 90 կգ/ha չափաբաժիններով:

Լեռնային սևահողերի անջրդի պայմաններում, Շիրակում և Սևանի ավազանի անբավարար խոնավության գոտիներում, 30-35 g/ha բերքատվության ակնկալիքի դեպքում, ցելերից և բազմամյա խոտաբույսերից հետո, անհրաժեշտ է ազոտի չափաբաժինը կրճատել 30 տոկոսով:

Լոռի-Փամբակի գոտու բնական խոնավությամբ ապահովված լեռնային վազված սևահողերում, 45-50 g/ha բերքատվության դեպքում, հացահատիկային նախորդից հետո սնուցել 150, իսկ շարահերկ մշակաբույսերից հետո՝ 120 կգ/ha ազոտի չափաբաժինով:

Հյուսիս-արևելյան գոտու դարչնագույն, անտառային ջրով հողերում (35-40 g/ha բերքատվության դեպքում) շարահերկ մշակաբույսերից հետո անհրաժեշտ է հեկտարին տալ 120, իսկ բազմամյա խոտաբույսերից հետո՝ ազոտի նորման կրճատել 30 տոկոսով:

Հանրապետության ջրով երկրագործության վարման գոտիներում սնուցումից անմիջապես հետո անհրաժեշտ է իրականացնել ոռոգում: Արարատյան հարթավայրի պայմաններում, ծովի մակերևույթից մինչև 900 մ բարձրության վրա, ջրումը կատարվում է 3-4 անգամ: Հացահատիկային մշակաբույսերի համար կարևոր նշանակություն ունի վերջին հատիկայիցի ջուրը, որը համընկնում է կաթնամոմային հատուկացման փուլի հետ:

Ցանքերի գարնանային խնամքի միջոցառումների շարքում կարևոր նշանակություն ունի նաև պայքարը մոլախոտերի դեմ: Հացահատիկի դաշտերում քիմիական քաղցանի նպատակով լայնորեն կիրառվող հերբիցիդներից է 2,4 Դ ամինային աղը (0,85 -1,4 l/ha նորմայով): Հացագգի մոլախոտերով վարակված դաշտերն անհրաժեշտ է սրսկել Կվարց-սուպեր հերբիցիդով՝ 1,5-2 l/ha նորմայով: Խրվուկով ուժեղ վարակված դաշտերը սրսկել Տոպիկ պատրաստուկով՝ 0,3-0,4 l/ha նորմայով: Միայն հացագգի մոլախոտերի առկայության դեպքում, պատրաստուկի նորման հասցնել 0,5-0,75 l/ha-ի: Տատասկով, երիցուկով, մատիտեղով վարակված դաշտերը կարելի է սրսկել Լոնտրել-300 պատրաստուկով՝ 0,16-0,66 l/ha նորմայով: Պատատուկով վարակված ցանքերը սրսկել Ստարանե հերբիցիդով՝ 0,75-1,0 l/ha նորմայով:

Սրսկումներն անհրաժեշտ է կատարել մինչև բույսերի ցողունակալման փուլը, արևոտ օրերին, երբ օդի ջերմաստիճանը հասնում է ոչ պակաս 12°C-ի: Ուշացած սրսկումների դեպքում բույսերի մոտ առաջանում են այլասերումներ, հասկի հիմքի և ծայրի մասերում հատիկ չի ձևավորվում և հասկերը ստացվում են սորտին ոչ բնորոշ:

Հացահատիկային մշակաբույսերի գարնանային մշակության տեխնոլոգիայի ճիշտ և ժամանակին կիրառումը հնարավորություն կտա ֆերմերային տնտեսություններին, ըստ մշակության գոտիների, միջին հաշվով, ստանալու 5-10 g/ha հատիկի լրացուցիչ բերք:

Ռ. Ղազարյան
գյուղատնտեսական գիտությունների թեկնածու,
Երկրագործության գիտական կենտրոն

Համայնքային

ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ՝ ԱՌԱՋՆԱԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Ազգային ժողովի նախագահ Դավիթ Աբրահամյանն այցելել է սահմանամերձ բերքաբերքիներին: Սահմանապահ զինվորների հետ անմիջական զրույցից հետո, օրենսդրի ղեկավարն այցելել է Բերքաբեր՝ ծանոթանալու պետական միջոցներով հիմնադրված դպրոցի առկա պայմաններին:

Դավիթ Աբրահամյանը համակարգիչներ ու մարգագույք է նվիրել դպրոցին, այնուհետև լսել համայնքի բնակչությանը մտահոգող խնդիրները, որոնք վերաբերում էին խմելու ջրին, գազաֆիկացմանն ու համայնքային ճանապարհների բարեկարգմանը: Կարևորելով նշված խնդիրների լուծումները՝ նա տեղեկացրել է, որ ջրամատակարարումը գյուղում առաջնահերթ լուծում կստանա, իսկ գազաֆիկացումն էլ արդեն լուծման ճանապարհին է:

Հաջորդ հանդիպումը Այգեհովիտ-Վազաշեն-Պառավաբար-Այգեպար հանրապետական նշանակության ավտոճանապարհի Վազաշեն-Պառավաբար վտանգավոր տեղամասը շրջանցող՝ նոր կառուցվող ճանապարհահատվածում էր, որտեղ նա ծանոթացավ կատարվող աշխատանքների ընթացքին և տեղեկացավ, որ շուրջ 520.0 մլն դրամ նախահաշվային արժեքով, 3.2 կմ երկարությամբ նոր կառուցվող ճանապարհահատվածը նախկին ճանապարհը կկրճատի 1.9 կմ-ով: Այնուհետև Վազաշեն համայնքում Ազգային ժողովի նախագահը ծանոթացավ գյուղի նորակառույց համայնքային կենտրոնին, որի ընդարձակ դահլիճում էլ հանդիպեց բնակչությանը: Նա կարևորեց իշխանությունների ուշադրությունը սահմանամերձ համայնքների հանդեպ՝ շեշտելով առկա խնդիրների պարտադիր լուծումների անհրաժեշտությունը: Համայնքի ղեկավար Լորիկ Բաղդոյանի ներկայացմամբ, հիմնախնդիր են ջրամատակարարումն ու մանկապարտեզի կառուցումը: Դավիթ Աբրահամյանը խոստացավ, որ բարձրացված և բնակչությանը հուզող նաև այլ խնդիրներ լուծում կստանան:

Այցի վերջին հանգրվանը Ազատամուտում էր, որտեղ բարձրաստիճան ղեկավարին դիմավորեցին երգ ու պարով: Հանդիպման ընթացքում գյուղի մանկապարտեզի սաները խաղալիքներ ստացան, իսկ գյուղապետարանը՝ համակարգիչ:

S.Նազիկյան
Տավուշի ԳԱՄԿ

ԽՆԴՈՒԻ ԱՅԳԻՆԵՐԻ ՑՐՏԻՑ ՎՆԱՍՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ

Վերջին տարիների համեմատ, այս տարի բավականին ցրտաշունչ ձմեռ էր Հայաստանում: Բնականաբար այդ տևական սառնամանակը գյուղացուն անհանգստանալու և մտահոգվելու տեղիք տվեց:

Վայոց ձորի ԳԱՄԿ-ի մասնագետները քայլեր ձեռնարկեցին, որպեսզի ճշտեն՝ արդյոք 710.1ha խաղողի բերքատու այգիները վնասվել են տևական ցրտերից, թե՛ ոչ: Նրանք Արենիից Վերնաշեն ընկած հատվածներից (Արենի, Արփի, Աղավաճոր, Գետափ, Գլաճոր, Վերնաշեն) վերցրել են խաղողի մատերի նմուշներ և իրականացրել ստուգիչ դիտարկումներ:

Ուսումնասիրություններից պարզվել է, որ հունվար ամսվա տևական ցրտերի հետևանքով, ցրտահարությունը չի գերազանցում մոտ 10%-ը: Վերջինս, ըստ մասնագետների եզրակացության, զգալի մասը սեղանի սպիտակ սորտի խաղողն է եղել:

Գյուղացին, մշտապես կապ պահպանելով ԳԱՄԿ-ի մասնագետների և խորհրդատուների հետ, տեղեկանում է նմանատիպ իրավիճակներում հետագա իրականացվելիք քայլերի մասին, արդյունքում՝ ինչ-որ չափով մեղմելով բնության պատճառած վնասի չափը:

ՕՃԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ ԳՅՈՒՂԱՅՈՒՆ

ՀՀ կառավարությունը, հողօգտագործողին աջակցման ծրագրերի շրջանակներում, առաջարկում է շուկայականից բավականին մատչելի գներով պարարտանյութեր, վառելիքային և որակյալ սերմացուներ:

ՀՀ Վայոց ձորի մարզի համայնքապետերը մարզպետարան են ներկայացրել 2014թ. գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման համար՝ ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի, դիզելային վառելիքային, գարնանացան գարու, առվույտի և եգիպտացորենի սերմացուների պահանջարկի հայտերը՝ նախապես վճարելու պայմանով:

Վայոց ձորի մարզպետարանի Գյուղատնտեսության և բնապահպանության վարչությունը գյուղատնտեսության նախարարություն է ներկայացրել նախնական հայտերի հետևյալ ցուցանիշը՝ ազոտական պարարտանյութ (50կգ, 1 պարկը՝ 6000 դրամ, պահանջարկը՝ 470 տոննա), ֆոսֆորական պարարտանյութ (1 պարկը՝ 7000 դրամ, պահանջարկը՝ 4 տոննա), կալիումական պարարտանյութ (1 պարկը՝ 7000 դրամ, պահանջարկը՝ 4 տոննա) դիզելային վառելիք (1 լիտրը՝ 350 դրամ, պահանջարկը՝ 341600 լիտր), գարնանացան գարու սերմացու (1 կգ-ն՝ 200 դրամ, պահանջարկը՝ 65.5 տոննա), առվույտի սերմացու (1 կգ-ն՝ 1500 դրամ, պահանջարկը՝ 1,1 տոննա), եգիպտացորենի սերմացու (1 կգ-ն՝ 350 դրամ, պահանջարկը 0,03 տոննա):

Ա. Գրիգորյան
Վայոց ձորի ԳԱՄԿ

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՊՀ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՐՑՈՒՅԹ

ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի կողմից իրականացվում է «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագիրը, որի բաղադրիչներից է «Մրցակցային դրամաշնորհների ծրագիրը»: Մրցակցային դրամաշնորհային ծրագրերը իրականացվում են Հայաստանի Հանրապետության 10 մարզերում: Ծրագրերի ընտրությունը կատարվում է մրցության կարգով՝ համաձայն գործող ընթացակարգի:

Նպատակը. Մրցակցային դրամաշնորհային ծրագրի հիմնական նպատակն է՝ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտում աջակցել նոր արտադրատեսակների, տեխնոլոգիաների, մեխանիզմների ստեղծմանն ու փարաձմանը:

Ընդունելի տեխնոլոգիաներ. Ներկայացվող ծրագրային առաջարկները պետք է համապատասխանեն հետևյալ չափորոշիչներին՝

- Գյուղատնտեսական ոլորտում արտադրվող արտադրանքի (գյուղմթերքի) որակի և որակական հատկությունների բարձրացում:
- Գյուղատնտեսական բիզնեսի շուկայավարման կարգադրումը՝ ներառյալ գյուղատնտեսական ապրանքների (մթերքների) արտադրություն, վեճակում, պահեստավորում, նոր տեխնոլոգիաների ներդրում:
- Գյուղական բիզնեսի կառավարման բարելավում, կարգադրում և բիզնեսի լավագույն փորձի զարգացում և փարաձում:
- Գյուղատնտեսության ոլորտում կոոպերացիայի զարգացում, շուկայական կապերի ընդլայնում և ամրապնդում, ինչպես նաև գյուղմթերքների իրացման խնդիրների լուծում:
- ՀՀ տարածաշրջաններում կամ մարզերում գյուղատնտեսական արտադրանքի (մթերքի) նոր տեսակների և նոր տեխնոլոգիաների ներդրում, փարաձում և զարգացում:

Իրավասու հավակնորդներ. Մրցակցային դրամաշնորհային ծրագրի մրցույթին կարող են մասնակցել՝

- Գյուղական ոլորտում գործող անհատ ձեռնարկատերեր, կոոպերատիվներ, ձեռնարկություններ (ՍՊԸ և այլն), միավորումներ (ասոցիացիաներ),
- Համայնքներում հիմնված ֆերմերային ֆորմալ և ոչ ֆորմալ (չգրանցված) գյուղական բիզնեսի խմբեր:

Ֆերմերային խմբերը պետք է բաղկացած լինեն առնվազն 5 հոգուց և ունենան փարաձու սեփական հողակտորներ (ֆերմերային խմբի անդամները չպետք է լինեն միևնույն ընտանիքից, բայց կարող են լինել բարեկամներ): Խմբի անդամները պետք է լինեն նույն մարզից:

Համագործակցություն. Դրամաշնորհ ստանալու համար դիմորդները պարտավոր են համագործակցել որակավորված ծառայություն մատուցողների հետ: Ծառայություն մատուցողներից պահանջվում է ապահովել տեխնիկական աջակցություն առաջարկի նախապարաաստման և իրականացման գործընթացին:

Ծառայություն մատուցող կարող են լինել՝

- Մասնավոր խորհրդարկական համակարգի մասնագետներ
- Անկախ մասնագետներ և տեխնիկական փորձագետներ
- Հասարակական, հեղափոխական, կրթական և խորհրդարկական հաստատությունների մասնագետներ
- Երկրում գործող միջազգային այլ ծրագրերի փորձագետներ և մասնագետներ:

Մասնակցության պայմանները. Հավակնորդը (դիմորդը), ծառայություն մատուցողի և այլ մասնակիցների հետ միասին, պետք է ներդնեն ծրագրով պահանջվող դրամաշնորհի ընդհանուր արժեքի նվազագույնը 30 տոկոսը՝ կանխիկ գումարային տեսքով:

Որպես այլ մասնակցի պարտականություն՝ փարաբեր գործընկերների մասնակցությունն ու ներդրումը պետք է հաստատվի գրավոր համաձայնագրով, կնքված հիմնական հավակնորդի, ծառայություն մատուցողի և այլ մասնակցի միջև:

Բացի ֆինանսական ներդրումից, հավակնորդները կարող են կատարել ներդրումներ նաև բնամթերային տեսքով (շենք, շինություն, հող, աշխատուժ, հումք, գյուղմթերքներ, սարքավորումներ, անասուններ, ծառայություններ և այլն), որոնք ուղղակիորեն կապված են դրամաշնորհային ծրագրի իրականացման հետ:

Ներկայացվող պահանջները. Հավակնորդի (դիմորդի) կողմից ներկայացված հայտը պետք է բավարարի հետևյալ պահանջներին՝

- Առաջարկվող ծրագրի տևողությունը չպետք է գերազանցի 24 ամիսը,
- Դրամաշնորհի գումարը պետք է լինի. նվազագույնը՝ 8,000 ԱՄՆ դոլար, իսկ առավելագույնը՝ 20,000 ԱՄՆ դոլար,
- Հայտով պահանջվող դրամաշնորհը պետք է ուղեկցվի նշված դրամաշնորհի գումարի առնվազն 30%-ի չափով կանխիկ համաֆինանսավորմամբ,
- Ընդհանուր ծրագրի արժեքը չպետք է գերազանցի 60,000 ԱՄՆ դոլարը,
- Դիմորդը չի կարող ստանալ մեկ անգամից ավելի դրամաշնորհ,
- Դրամաշնորհ չի հարկացվի այն հավակնորդներին, որոնք անհաջողության են մատնել կամ նախկինում ձախողել որևիցե դրամաշնորհային ծրագիր:

Հայտերի (դիմումների) ընդունումը. Շահագրգիռ հավակնորդները (դիմորդները) իրենց կողմից պարաաստված հայտերն ու պահանջվող փարաաթյոթերը պետք է ներկայացնեն «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի Մրցակցային դրամաշնորհային ծրագրերի քարտուղարություն՝ մինչև 2014 թ. ապրիլի 07, ժամը 16:00:

Վերջնաժամկետից հետո ներկայացված դիմումները չեն ընդունվի:

Հայտերը պետք է ներկայացվեն փակ ծրարներով, չորս օրինակից՝ մեկը բնագիր, երեքը կրկնօրինակներ:

Ծանուցում՝ ինչպես ընտրված, այնպես էլ մերժված հայտարարները կտեղեկացվեն գրավոր: Մերժված հայտարարներին կվերադարձվեն իրենց կողմից ներկայացված փարաաթյոթերի բնօրինակը:

Դրամաշնորհների հարկացման և հայտերի պարաաստման կանոնակարգերին մանրամասն ծանոթանալու նպատակով, «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի Մրցակցային դրամաշնորհային ծրագրերի քարտուղարության աշխատակազմը՝ գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնների հետ համատեղ յուրաքանչյուր մարզում կկազմակերպեն հանդիպումներ հայտարարների (դիմորդների) հետ, ըստ ներքոնշյալ ժամանակացույցի.

- ՀՀ Շիրակի մարզում, 2014 թ. մարտի 03-ին, ժամը 11:00:
ք. Ախուրյան, Ախուրյանի գյուղատնտեսարանի շենք, Գյումրու խճուղի - 42 շենք, 3-րդ հարկ
- ՀՀ Լոռու մարզում, 2014 թ. մարտի 03-ին, ժամը 15:00:
ք. Սպիտակ, Շահումյան փող. 7 շենք (քաղաքապետարանի շենք)
- ՀՀ Տավուշի մարզում, 2014 թ. մարտի 04-ին, ժամը 11:30:
ք. Իջևան (մարզպետարանի շենք), Սահմանադրության փող. 1 շենք
- ՀՀ Ղեղարքունիքի մարզում, 2014 թ. մարտի 04-ին, ժամը 15:00:
ք. Գավառ, Սայաթյան փող. 13 շենք
- ՀՀ Սյունիքի մարզում, 2014 թ. մարտի 05-ին, ժամը 13:00:
ք. Գորիս, Մաշտոցի փող. 3 շենք (նախկին գործկոմի շենք)
- ՀՀ Վայոց ձորի մարզում, 2014 թ. մարտի 05-ին, ժամը 16:30:
ք. Եղեգնաձոր (մարզպետարանի շենք), Շահումյան 5
- ՀՀ Արարատի մարզում, 2014 թ. մարտի 06-ին, ժամը 11:00:
ք. Արարատ, Շահումյան փող., 34 շենք (քաղաքապետարանի շենք)
- ՀՀ Կոտայքի մարզում, 2014 թ. մարտի 06-ին, ժամը 15:00:
ք. Աբովյան, Նոր-Գյուղ, 1-ին փողոց, 4-րդ հասցե (Աբովյան քաղաքի անասնաբուժարանի շենք)
- ՀՀ Արագածոտնի մարզում, 2014 թ. մարտի 07-ին, ժամը 11:00:
ք. Աշտարակ (մարզպետարանի շենք), Վարդգես Պետրոսյանի փողոց, 4 շենք
- ՀՀ Արմավիրի մարզում, 2014 թ. մարտի 07-ին, ժամը 14:00:
ք. Արմավիր (մարզպետարանի շենք), Աբովյան 71

Փաստաթյոթերի ներկայացման վերաբերյալ տեղեկություններ

Հայտերի պաշտոնական ձևակարգերն ու հայտերի լրացման հետ կապված այլ անհրաժեշտ տեղեկություններ կարող եք անվճար ստանալ՝

- Գյուղատնտեսական աջակցության մարզային կենտրոններից
- «ԳԾԻԳ» ՊՀ-ից

Էլ. փոստ - info@arspiu.com
Կայք - www.arspiu.com
Հեռ. - 29-73-01; 29-73-02; 29-73-03

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ

ՍԵՄԻՆԱՐ ՄԱՐՄԱՇՆՈՐԻՄ

Օրերս, Ախուրյանի տարածաշրջանի Մարմաշեն համայնքում, «Վորլդ Վիժն Հայաստան» միջազգային կազմակերպության Գյումրիի տարածքային զարգացման գրասենյակի նախաձեռնությամբ, Շիրակի ԳԱՄԿ-ի կողմից անցկացվեցին սեմինարներ, որոնք վարում էին Շիրակի ԳԱՄԿ-ի տնօրեն Զիվան Ասլանյանը, ԳԱՄԿ-ի մասնագետներ՝ Ն. Մկրտչյանը, Ա. Հարությունյանը և Գ. Մկրտչյանը:

Ուսուցմանը մասնակցող ֆերմերների ուշադրությանը ներկայացվեցին հետևյալ թեմաները՝ «Գյուղատնտեսական կոոպերատիվներ», «Կոոպերատիվները՝ ըստ գործունեության հիմնական ձևերի», «Կոոպերատիվների կազմակերպման իրավական հիմքերը և համագործակցությունը այլ կազմակերպությունների հետ», ինչպես նաև՝ «Գյուղատնտեսության վարման նոր տեխնոլոգիաներ և ոչ ավանդական մշակաբույսեր», «Հողի առանց վարի մշակության տեխնոլոգիա կամ հողի զրոյական մշակման համակարգը», «Ցանքաշրջանառությունը՝ բարձր բերքի երաշխիք»:

Սեմինարներին մասնակցած ֆերմերները ոչ միայն քննարկեցին թեմաները, այլև ստացան իրենց հուզող հարցերի պարասխանները: Վերջում բաժանվեցին Շիրակի ԳԱՄԿ-ի կողմից կազմված խորհրդարկական թերթիկների փաթեթներ, ինչպես նաև «Գյուղաշխարհ» մարզային պարբերականի նոր համարներ:



Շիրակի ԳԱՄԿ

ՀԵՏԱՔՐՔԻՐ, ՕԳՏԱԿԱՐ ԵՎ ԶԱՐԲԱՆԱԼԻ

ՍԵՐԿԵՎԻԼԻ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սերկևիլի հայրենիքը Միջին Ասիան է, սակայն կա կարծիք, որ այդ տարածքներում աճող տեսակների պտուղն ուտելի է դառնում մի քանի ամիս հատուկ պայմաններում պահելուց հետո միայն:



Թթուներ՝ խնձորաթթու, գինեթթու, կիտրոնաթթու և շատ միկրոտարրեր: Սերմերը պարունակում են օսլա, ճարպալույծեր և այլ օգտակար նյութեր: Որպես միզամուղ միջոց՝ այն լայնորեն կիրառվում է սրտաևտոբիոսպիկ հիվանդություն ունեցողների վիճակը թեթևացնելու, իսկ սերմերից պատրաստած թեյը՝ մրսաձուլության, հագի, բրունխիտի, նաև՝ կոլիտի բուժման համար:

Սերկևիլը նաև սրտխառնոցը հանգստացնող միջոց է, իսկ թարմ պտուղները, երկաթի բարձր պարունակության շնորհիվ, կիրառվում են սակավարյունության դեպքում: Պտուղներն օժտված են հակաանթիվ հատկությամբ: Նույնիսկ փաստեր կան, որ միջնադարի հայկական իրականության մեջ սերկևիլից պատրաստված եփուկներով բուժում էին հազը, թոքախտն ու այլ դժվար բուժվող հիվանդություններ:

Սերկևիլի թարմ պտուղներից պատրաստված օշարակը շատ օգտակար է անեմիայի ժամանակ, իսկ դրանք խորոված կամ եփած վիճակում՝ օրը 100-ական գրամ, կարելի է ուտել բրունխիտի դեպքում:

Սերկևիլի թուրմը շատ լավ է աչքերի լվացման, շեշտոկների, շատ այլ հիվանդությունների բուժման համար: Այն նաև շատ լավ սնուցող դիմակ կարող է հանդիսանալ դեմքի մաշկի համար: Սերկևիլի հյութը լայնորեն կիրառվել է Ճապոնիայում՝ բնակչության առողջության վերականգնման ծրագրերում: Ճապոնացի գիտնականներն ապացուցել են, որ հյութը կապում և հեռացնում է ծաղիկակտիվ տարրերը մարդու օրգանիզմից: Ճապոնիայում սերկևիլեին լայնորեն օգտագործվում է բնակավայրերի կանաչապատման համար, քանի որ մաքրում է աղտոտված օդը:

Ղեռ հնում՝ 4000 տարի առաջ, սերկևիլի համեղ ու բուրավետ պտուղներն անվանում էին «ոսկե խնձորներ»: Ղեռ այն ժամանակ այդ պտուղները համարվում էին սիրո, գեղեցկության, պողաբերության ու ընտանեկան ջերմության խորհրդանշան: Նույնիսկ 3ին շունաստանում, հարսանիքի օրը նորապսակները պետք է անպայման սերկևիլ ուտեին, որպեսզի նրանց ողջ կյանքն անցներ համերաշխ ու բարի մթնոլորտում: Սերկևիլը մեղրատու բույս է, եթե մոտակայքում կա մեղվափեթակ, ապա բերքն առատ է լինում, քանի որ մեղուները նախընտրում են հավաքել հենց այդ ծառի ծաղկախյուղը:

Սերկևիլը շատ ջերմասեր բույս է, սակայն կարող է նաև դիմանալ 30-40 աստիճան սառնամանիքին: Նրա համեղ ու բուրավետ պտուղներից պատրաստում են հյութեր, կոմպոտներ, մուրաբա և այլ պահածոներ, օգտագործում նաև գինեգործության ու հրուշակեղենի արտադրությունում: Սերկևիլեին հնագույն ժամանակներից օգտագործվել է ժողովրդական բժշկության մեջ. բուժիչ հատկություններ ունեն տերևը, պտուղը, պտղահյութը, սերմը: Սերկևիլի մեղրը կարգավորում է արյան ճնշումը՝ տատանումների դեպքում, կիրառվում է առիթմիայի բուժման համար, ամրացնում սիրտ-անոթային համակարգը: Պտուղները հասունանում են սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին, հավաքելուց հետո պահում են հով տեղում: Այդ ընթացքում պտուղներում բարձրանում է շաքարների և օրգանական թթուների պարունակությունը, թափվում վրայի խավը, միրգը դառնում է ավելի համեղ:

Բուժական նպատակով օգտագործում են նաև սերկևիլի պտուղները: Ղրանք պարունակում են ֆրուկտոզա, օրգանական

՝ 3 ԿՇ 3 ñ» Ծ» ԿՇ 3 ԲԷ 3 ñՆԿ 3 Է 3 ԿՕ . 3 Ծի ԿՇ ԿՇ» ñՇ

Երբ մենք գնում ենք խանութ կամ դուրս ենք գալիս շուկա՝ բանջարեղեն գնելու, հմայվում ենք զույների առատությամբ և բանջարեղենի բազմազանությամբ՝ կապույտ սմբուկ, դեղին դդմիկ կամ կարմիր լոլիկ... Ցանկանում ենք անմիջապես մի համեղ բան պատրաստել և տեղում ուտել: Ինչպես գիտենք, բանջարեղենը շատ օգտակար է առողջության համար և հիմք է հանդիսանում շատ ճաշատեսակների համար:

Այն կարևոր բաղադրամասն է շոգեխաշվող ճաշատեսակների, նաև մատուցվում է որպես խավարտ՝ ձկան, մսի և թռչնամսի ճաշատեսակների հետ: Բանջարեղենը բուսականների սննդակարգում լավ զուգակցվում է ընկույզի, ձավարեղենի և ընդեղենի հետ: Բանջարեղենային ճաշատեսակների պատրաստումը մեզ տալիս է հրաշալի նոր խոհարարական փորձ, և, բացի այդ, երբ դրանք պատրաստվում են ինչպես հարկն է, ապա համեղ են, անուշաբույր և սննդարար:



Թարմ բանջարեղենը պահանջում է պատրաստման նվազագույն ջանքեր, ինչքան քիչ է մշակվում, այնքան առողջարար է: Այն պետք է մատուցվի, երբ թարմ է, հում կամ եփվել է նվազագույն չափով, որպեսզի չկորցնի վիտամինները: Թարմ բանջարեղենը պարզապես իդեալական է այն մարդկանց համար, ովքեր չեն կարող ժամանակ ծախսել կերակուր պատրաստելու վրա: Այն նաև հրաշալի միջոց է նրանց համար, ովքեր սկսում են իրենց «արկածները» խոհանոցային գործում, քանի որ պատրաստման հեշտությունը քաջալերում է նրանց խոհանոցում կատարել փորձարկումներ:

ՄԱՎԵՐ և ապրեք առողջ

Առողջ սննդակարգը տալիս է մեզ վստահություն. ունենում ենք ավելի լավ արտաքին, ավելի լավ ինքնագգացողություն և ավելի շատ էներգիա: Սննդակարգի մասնագետների տեսակետները և սննդային միտումները մշտապես փոփոխվում են, սակայն առողջ սննդակարգի սկզբունքը միշտ մնում է նույնը: Մենք պետք է օրվա մեջ նվազագույնը 3 անգամ ուտենք մրգեր և բանջարեղեն: Ոչ մի այլ դիետիկ սնունդ չի կարող հավասարվել մրգերին ու բանջարեղենին, քանի որ դրանք մեր կերակուրը բազմազան են դարձնում, ապահովում են վիտամիններով, միկրոտարրերով և մեր օրգանիզմին անհրաժեշտ այլ սննդատարրերով:

Եկեք օգտագործենք բնության այս պարզներն ամեն օր, և որպես հետևանք՝ կունենանք ավելի լավ ինքնագգացողություն, ավելի նրբագեղ կազմվածք և երկար ժամանակավ կյանքային հասնելը մեր առողջությունը լուրջ հիվանդություններից:

ԸՆԹԵՐՑՈՂ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՄԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ ԿԱՐՈՂ ԵՎ ՏՐԱՄԱԴՐԵԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ՝ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԶԵՉ ԸՈՒՂՈՂ ԸՐԳԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ: Հարցերը կարող եք ուղարկել E-mail: asrc@cln.am էլեկտրոնային հասցեին:

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է «ԱԳՐՈՒՂԱՏՈՒ» թերթի և «ԱԳՐՈԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ամսագրի 2014թ. բաժանորդագրությունը

«Ագրոլուսո» թերթ	
1 ամսվա գինը՝	3950 դրամ
6 ամսվա գինը՝	1980 դրամ
1 կամեթինը՝	120 դրամ

«Ագրոգիտություն» ամսագիր	
1 ամսվա գինը՝	8100 դրամ
6 ամսվա գինը՝	4050 դրամ
1 կամեթինը՝	1350 դրամ

Բաժանորդագրությունն իրականացնում են՝ Գյուղատնտեսության աշակերտության կենտրոնը և մարզային կենտրոնները, «Նայիտար», «Նայմամար», «Գրեա-Ագրոգի» կազմակերպությունները:

Ագրոլուսո AGRONEWS Հասցեն՝ Երևան, Մամիկոնյանց 39ա, հեռ.՝ 23-21-02, ֆաքս՝ 23-03-80 E-mail: asrc@cln.am կայք http://www.asrc.am

ՀԻՄՆԱԳԻՐ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն «Գյուղատնտեսության աշակերտության հանրապետական կենտրոն» ՓԲԸ Տնօրեն՝ ԱՐԹՈՒՐ ԱՎԱԳՅԱՆ Համարի պատասխանատու՝ Լիաննա Շախնազարյան

Տպարանակ՝ 1100 2 տպագրական մամուլ գրանցման թիվ՝ 01 Մ 000226 դասիչ՝ 69105 պատվեր թիվ՝ 11 ստորագրված է տպագրության 24.02.2014 թ. տպագրվում է ԳԱՀԿ տպարանում, Երևան, Մամիկոնյանց 39ա